ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
«ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ
✉ 1901 ՀՀ,ք.Ստեփանավան, Սուրբ Վարդանի 1
☎ (+374256) 22228 ; 23228 ; 22132

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МАРЗ ЛОРИ
"СТЕПАНАВАНИ БЖШКАКАН КЕНТРОН " ЗАО
✉ 1901 РА, г.Степанаван, ул. Сурб Вардани 1
☎ (+374256) 22228 ; 23228 ; 22132

24-215

<<20>> օգոստոսի 2024թ.

,,ԱՆՆԱՐԿԱ,, ՍՊԸ տնօրեն

Լիլիթ Փնջոյանին

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Հայտնում ենք Ձեզ, որ ,,Ստեփանավանի բժշկական կենտրոն,, ՓԲԸ-ի և ,,ԱՆՆԱՐԿԱ,, ՍՊԸ-ի միջև 05.01.2024թ. կնքվել է պետության կարիքների համար ապրանքի մատակարարման թիվ ՍԲԿ-ԳՀԱՊՁԲ-2024-3/2 պայմանագիրը:

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալի թիվ 03/26-1/17361-2024 գրության համաձայն ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը 05/04/2024թ. թիվ Ե/801-24 և 06/08/2024թ. թիվ Ե/1828-24 գրություններով ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացրել տեղեկատվություն համաձայն որի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված ,,Էսզեթ Ֆարմա,, ՍՊԸ-ին /ներառված է 06/05/2023թ. մինչև 20/06/2025թ./ գնումների մասին ՀՀ օրենսդրության իմաստով փոխկապակցված են ,,Էսզեթ ֆարմ,, և ,,ԱՆՆԱՐԿԱ,, ՍՊԸ-ները: Եթե 06/05/2023թ. սկսած ,,Էսզեթ ֆարմ,, և ,,ԱՆՆԱՐԿԱ,, ՍՊԸ-ները մասնակցել են գնման գործընթացներին, ապա այդ ընթացակարգերի մասով պետք է ձեռնարկվի միջոցներ վերջիններիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ուղղությամբ, իսկ եթե գնման գործընթացների մասնակցության արդյունքում կնքվել են պայմանագրեր, ապա այդ պայմանագրերը պետք է լուծվեն:

Ելնելով նշվածից և ղեկավարվելով ,,Ստեփանավանի բժշկական կենտրոն,, ՓԲԸ-ի և ,,ԱՆՆԱՐԿԱ,, ՍՊԸ-ի միջև 05.01.2024թ. կնքված պետության կարիքների համար ապրանքի մատակարարման թիվ ՍԲԿ-ԳՀԱՊՁԲ-2024-3/2 պայմանագրի 8.3 կետով լուծվում է ,,Ստեփանավանի բժշկական կենտրոն,, ՓԲԸ-ի և ,,ԱՆՆԱՐԿԱ,, ՍՊԸ-ի միջև 05.01.2024թ.

կնքված պետության կարիքների համար ապրանքի մատակարարման թիվ ՍԲԿ-ԳՀԱՊՁԲ-2024-3/2 պայմանագրը:

Կից ներկայացնում ենք՝

1. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի գրությունը
2. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի գրությունը
3. ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալի թիվ 03/26-1/17361-2024 գրությունը
4. ՀՀ պետական վերահսկողական ծառայության ղեկավարի 05.04.2024թ. թիվ Ե/801-23 գրությունը

<<Ստեփանավանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի

տնօրեն՝ Ա. Իսպիրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

☎ /0322/ 2-32-40

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

թիվ _____

« _____» _____ 2024թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻՆ

Հարգելի գործընկերներ

Ի գիտություն Ձեզ եմ տրամադրում ՀՀ պետական վերահսկողական ծառայության և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող կամ ՀՀ օրենսդրության իմաստով փոխկապակցված մասնակիցների մասին տեղեկատվություն՝ հետագա թյուրիմացություններից զերծ մնալու նպատակով:

Առդիր՝ 1 նիշք:

X _____

Հարգանքով՝ Կ.ԱՇՐԱՖՅԱՆ

կատ. Ռ.Պողոսյան
հեռ. /0322/ 2-33-99

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

«____» _____ 20 թ.
No _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ
ՌՈՄԱՆՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Ի պատասխան 29.07.2024 թ-ի թիվ Ե/1779-24 գրության

Հարգելի՛ պարոն Պետրոսյան,

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հետաքննության և օպերատիվ հետախուզության վարչության պետի համապատասխան որոշման հիմքով «ԷՍԶԵԹ ՖԱՐՄ» (ՀՎՀՀ 00498192) ՍՊԸ-ի նկատմամբ ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների շրջանակներում ընկերության միակ մասնակից և տնօրեն Երեմ Սարգսյանը բանավոր հարցին ի պատասխան հայտնել է, որ «ԷՍԶԵԹ ՖԱՐՄ» (ՀՎՀՀ 00498192) ՍՊ, «ԷՍԶԵԹ ՖԱՐՄԱ» (ՀՎՀՀ 00433863) ՍՊ և «ԱՆՆԱՐԿԱ» (ՀՎՀՀ 02656691) ՍՊ ընկերությունները փաստացի պատկանում են իրեն, ղեկավարվում և տնօրինվում են իր կողմից:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

X _____

ՌՈՒՍՏԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ

Կատարող՝ ՀՕՀՎ թիվ 10 ոլորտային և ԱԿ բաժնի
գլխավոր մասնագետ Աննա Պողոսյան
հեռախոս՝ 060 844-870

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Վեբ կայք՝ www.minfin.am, ֆիննախ.հայ
Էլ. փոստ՝ secretariat@minfin.am
Հեռ.՝ (+374 11) 800 011

№ 03/26-1/17361-2024

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ

ՊԱՏՃԵՆԸ՝ ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Հարգելի գործընկերներ

Հայտնում ենք, որ ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը 05/04/2024թ. թիվ Ե/801-24 և 06/08/2024թ. թիվ Ե/1828-24 գրություններով (կցվում են) ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացրել տեղեկատվություն համաձայն որի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված «Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ-ին (ներառված է 06/05/2023թ. մինչև 20/06/2025թ.) գնումների մասին ՀՀ օրենսդրության իմաստով փոխկապակցված են «Էսզեթ ֆարմ» և «Աննարկա» ՍՊԸ-ները:

Այս կապացությամբ հայտնում ենք, որ ՀՀ կառավարության 04/05/2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի՝

- 121-րդ կետի համաձայն՝ մասնակցի «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու

ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:

- 32-րդ կետի 1-ին մասի «բ» պարբերության համաձայն մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հավաստում՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր և իրեն փոխկապակցված անձանց համապատասխանության մասին.

- 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովումը կամ համաձայնագիրը կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը չի փոխարինում տուժանքի ձևով ներկայացված որակավորման կամ պայմանագրի ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

33-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագրով (նախագծով) սահմանվում է նաև, որ այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է ՀՀ օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է: Նշված կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում հսկողություն և (կամ) վերահսկողություն իրականացնող մարմինները, իսկ մյուս դեպքերում պատվիրատուն այդ մասին ծանուցում

են՝ իրավապահ մարմիններին՝ վերջիններիս և պայմանագիր կնքած մասնակցին ներկայացնելով հիմքերը:

Վերոգրյալի ամփոփմամբ գտնում ենք, որ եթե 06/05/2023թ. սկսած «Էսզեթ ֆարմ» և «Աննարկա» ՍՊԸ-ները մասնակցել են գնման գործընթացներին, ապա այդ ընթացակարգերի մասով պետք է ձեռնարկվի միջոցներ վերջիններիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ուղղությամբ, իսկ եթե գնման գործընթացների մասնակցության արդյունքում կնքվել են պայմանագրեր, ապա այդ պայմանագրերը պետք է լուծվեն:

Միաժամանակ՝

- խնդրում ենք սույն գրության պատճենը տրամադրել պատվիրատուի համակարգում գործող ՓԲԸ-ներին, ՊՈԱԿ-ներին և հիմնադրամներին.
- ՀՀ մարզպետարաններին՝ խնդրում ենք սույն գրության պատճենը տրամադրել նաև մարզի վարչական սահմաններում գտնվող համայնքներին և վերջիններիս համակարգում գործող ՓԲԸ-ներին, ՀՈԱԿ-ներին և հիմնադրամներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

X _____ ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Կատարող՝ Գ. Մեհրաբյան
Հեռ. 011800147

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ

Ե/801-23
05 Ապրիլի, 2024թ.

0077, ք. Երևան, Մ. Մաշտոցի պողոտա 47

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
ՎԱՀԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Հովհաննիսյան,

Ղեկավարվելով «Պետական վերահսկողական ծառայության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով՝ ՀՀ պետական վերահսկողական ծառայություն (այսուհետ՝ Ծառայություն) մուտքագրված հանրագրի շրջանակում իրականացվում է մշտադիտարկում միմյանց հետ փոխկապակցված՝ «Աննարկա» (ՀՎՀՀ՝ 02656691), «Էսզեթ ֆարմա» (ՀՎՀՀ՝ 00433863) և «Էսզեթ ֆարմ» (ՀՎՀՀ՝ 00498192) ՍՊ ընկերությունների կողմից հանրային գնումների գործընթացներին ոչ բարեխիղճ վարք դրսևորելու վերաբերյալ:

Իրականացվող մշտադիտարկմամբ պարզվել է, որ **«Աննարկա» ՍՊ ընկերության իրական շահառուն և 100 տոկոս բաժնետերը 2022 թվականի սեպտեմբերի 12-ից մինչև 2023 թվականի նոյեմբերի 23-ը հանդիսացել է Երեմ Արկադիի Սարգսյանը (ՀԾՀ՝ 1101770244)**: Համաձայն տեղեկագրում *(օրենքով նախատեսված հրապարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք)* հրապարակված տեղեկատվության՝ «Աննարկա» ՍՊ ընկերությունը 2023 թվականի փետրվարի 10-ից մինչև 2025 թվականի փետրվարի 10-ը «Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի հիմքով ներառվել է գնումների գործընթացներում իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ): Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2023 թվականի մարտի 18-ի թիվ ԵԴ/2925/02/23 որոշման հիման վրա՝ մինչև տվյալ գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը, **2023 թվականի մարտի 23-ից հանվել է Ցուցակից**:

2022 թվականի սեպտեմբերի 12-ից մինչև 2023 թվականի մայիսի 11-ը Երեմ Արկադիի Սարգսյանին 100 տոկոս բաժնետիրական իրավունքով է պատկանել նաև

«Էսզեթ ֆարմա» ՍՊ ընկերությունը: Համաձայն տեղեկագրում հրապարակվ տեղեկատվության՝ «Էսզեթ ֆարմա» ՍՊ ընկերությունը 2023 թվականի մայիսի 6-ից մին 2025 թվականի հունիսի 20-ը ներառյալ ընդգրկվել է Ցուցակում: **Ցուցակում ընդգրկվել պահի դրությամբ «Էսզեթ ֆարմա» ՍՊ ընկերության 100 տոկոս բաժնետերը իրական շահառուն հանդիսացել է նույն Երեմ Սարգսյանը:** Վերջինս, «Էսզեթ ֆարմ ՍՊ ընկերության Ցուցակում ընդգրկվելու պահին հանդիսացել է նաև «Աննարկա» Ն ընկերության 100 տոկոս բաժնետերը և իրական շահառուն: Ցուցակում ընդգրկվելը հետո Երեմ Սարգսյանը «Էսզեթ ֆարմա» ՍՊ ընկերության 100 տոկոս մասնաբաժի օտարել է Խաչատուր Հունանյանին և համաձայն ՀՀ արդարադատությ նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնայ համակարգի՝ 2023 թվականի մայիսի 11-ից ընկերության 100 տոկոս ուղղա մասնակցությամբ իրական շահառու է հանդիսանում Խաչատուր Հունանյանը:

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 119-րդ կետի 2-ենթակետի «ա.» պարբերության՝ գնումների հետ կապված հարաբերություններ կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության իմաստով՝ **ֆիզիկական իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք գործել համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից կամ եթե տվյ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում է՝ տվյ իրավաբանական անձի բաժնետոմսերի տասը տոկոսից ավելիին տնօրին մասնակից:**

Կարգի 121-րդ կետով՝ մասնակցի՝ **Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածո ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումնե գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման**:

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ.» պարբերությամբ և 19-րդ ենթակետ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ **մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմ հաստատված հավաստում՝ հրավերով սահմանված մասնակցության իրավուն պահանջներին իր և իրեն փոխկապակցված անձանց համապատասխանությ մասին:**

Եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավու ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությա

չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կա ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագր ապահովումը կամ համաձայնագիրը կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձ չի փոխարինում տուժանքի ձևով ներկայացված որակավորման կամ պայմանագր ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթաց շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա.» ենթակետով՝ բացառությամ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսվա ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցել իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառվա են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակու Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝ խախտել է պայմանագրո նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնա պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագր միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագ մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրո սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորմա ապահովման գումարը:

Հիմք ընդունելով 2024 թվականի փետրվարի 9-ի թիվ 01/26-1/1406-202 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված դիրքորոշում այն մասին, որ «Ինչ վերաբերում է բաժնեմասի օտարումից հետո Երեմ Սարգսյան հետ փոխկապակցված այլ ընկերությունների՝ գնումների գործընթացի մասնակցության իրավունքի սահմանափակման դադարմանը, ապա, գտնում ենք, ո սահմանափակման հիմքերից որևէ մեկի (ցուցակում ընդգրկված լինելը մասնակցության սահմանափակումը փոխկապակցվածությունը) վերացում ինքնաբերաբար պետք է հանգեցնի այլ ընկերությունների գնումների գործընթացի մասնակցության իրավունքի վերականգնման՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ըստ էության, սահմանափակումը կիրառվել էր Երեմ Սարգսյանի՝ «Էսզեթ Ֆարմա ՍՊ ընկերության բաժնետոմսերի տասը տոկոսից ավելիին տնօրինող մասնակի (փոխկապակցված անձ) հանդիսանալու հանգամանքով պայմանավորված» Ծառայության կողմից ՀՀ պետական եկամուտների կոմիտե և ՀՀ ազգայի

անվտանգության ծառայություն հասցեագրված գրություններով հայցվել է պարզել Երեմ Սարգսյանի փոխկապակցվածությունը արդեն իսկ օտարված «Աննարկա» (ՀՎՀՀ՝ 02656691), «Էսզեթ Ֆարմա» (ՀՎՀՀ՝ 00433863) և «Էսզեթ Ֆարմ» (ՀՎՀՀ՝ 00498192) ՍՊ ընկերությունների հետ:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով Օրենքի շրջանակում լիազորված մարմինն է հանդիսանում ՀՀ Ֆինանսների նախարարությունը Ձեզ ենք ներկայացնում թվով 3 ընկերությունների փաստացի ղեկավարումն իրականացնող անձի վերաբերյալ տրամադրված տեղեկատվությունը (կտրամադրվի լրացուցիչ), գնումների օրենսդրությամբ սահմանված սահմանափակումների համապատասխան ընթացքն ապահովելու նպատակով:

Միաժամանակ խնդրում ենք ընթացքի և արդյունքների մասին տեղեկացնել Ծառայությանը:

Invalid signature

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ X ՌՈՄԱՆՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՌՈՄԱՆՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Signed by: PETROSYAN ROMANOS 3608790012

Կատարող՝ *Հասմիկ Ղազարյան*
Ստորաբաժանում՝ *Գնումների գործընթացների վերահսկողության վարչություն*
Հեռ՝ *010 31 32 32*